ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«12» Մայիսի 2026թ. N 67-Ա

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1-ին հոդվածի 3-րդ մասի 31-րդ կետով, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի օգոստոսի 23-ի N 06-Ն հրամանի 1-ին հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի «ե» պարբերությունը և 15-րդ կետը, որակավորման հանձնաժողովի 2026 թվականի ապրիլի 30-ի N 6 արձանագրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի կողմից 2026 թվականի ապրիլի 13-ին և մայիսի 6-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացված քաղաքաշինության բնագավառում նախատեսվող շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող «Էլեկտրամատակարարման սխեմաներում օգտագործվող հաղորդալարերն ու սարքավորումները» միջոցառման ծրագիրը և ծրագրին շնորհել 20 կրեդիտ:

2. Հաստատել «Էլեկտրամատակարարման սխեմաներում օգտագործվող հաղորդալարերն ու սարքավորումները» միջոցառման իրականացման ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 1-ին կետով նախատեսված միջոցառման կազմակերպչին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Պարտականությունները կատարող՝

Ստորագրող
ԴԱՎԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆ
2102800415

2026-05-12 17:59:50 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Դ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2026 թվականի Մարտի 12-ի N67-Ա հրամանի

«Էլեկտրամատակարարման սխեմաներում օգտագործվող հաղորդալարերն ու սարքավորումները» միջոցառման ժամանակացույց

Հ/Հ	Ամսաթիվ	Ժամ	Թեմայի անվանում	Միջոցառման պատասխանատու	Դասընթացների անցկացման ձևաչափը և վայրը	Միջոցառման կրեդիտները	Հավաստագրման ենթակա համապատասխան մասնագիտությունը	Մասնակցության վճարի չափը
1	2	3	4	5	6	7	8	9
1	Մայիսի 15-Հունիսի 6	Ուրբաթ օրերին ժամը 14:00-ից, շաբաթ օրերին ժամը 10:00-ից	«Էլեկտրամատակարարման սխեմաներում օգտագործվող հաղորդալարերն ու սարքավորումները» դասախոսություն	Վարդան Համբարյան, Էդուարդ Կուրղինյան	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան, 10-րդ մասնաշենք, 5-րդ հարկ, լսարան 10507, 2-րդ մասնաշենք, 2-րդ հարկ, լաբորատորիաներ 2226, 2235, 2236	20 կրեդիտ	<u>3-րդ կարգի մասնագետ</u> **07 և 09** մասնագիտություններ	80.000 դրամ